

# ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնը /այսուհետ՝ Կենտրոն/ գործում է համաձայն ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ՀՀ բնապահպանության նախարարության /այսուհետ՝ միասին՝ Հիմնադիր կողմեր/ միջև կնքված Փոխըմբռնման հուշագրի /այսուհետ՝ Փոխըմբռնման հուշագրի/ և սույն Կանոնակարգի դրույթների:

## 2. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՈՒ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

2.1. Կենտրոնի հայերեն անվանումն է՝ «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն» կամ Օրհուսի հայկական կենտրոն (հապավում՝ ԲՏՀԿ/ՕՀԿ), անգլերեն՝ «Public Environmental Information Center» կամ Armenian Aarhus Center (հապավում՝ PEIC/AAC):

2.2. Կենտրոնը չունի իրավակազմակերպչական կարգավիճակ:

2.3. Կենտրոնն ունի պաշտոնական խորհրդանիշ:

2.4. Կենտրոնի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մոսկովյան 35, ՀՀ Բնապահպանության նախարարություն, Երկրորդ հարկ, համաժողովների դահլիճ:

## 3. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Կենտրոնի նպատակներն ու խնդիրներն են.

- նպաստել Հայաստանում բնապահպանական քաղաքականության մշակման և կիրառման ոլորտում Կառավարության և հասարակական կազմակերպությունների միջև կայուն հարաբերությունների հաստատմանը,
- օժանդակել Հայաստանի բնապահպանական կազմակերպությունների և նրանց հավանական գործընկեր՝ միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա կառավարությունների միջև կապի հաստատմանը,
- ծառայել իբրև հիմք բնապահպանական հասարակական կազմակերպությունների միջև կոալիցիայի ստեղծման, ինչպես նաև՝ Հարավային Կովկասի երկրների հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության համար:

3.2. Կենտրոնն իրականացնում է իր նպատակներն ու խնդիրները հետևյալ եղանակներով.

- հնարավորություն է ընձեռում բնապահպանական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին և այլ շահագրգիռ անձանց անվճար օգտվել բնապահպանական գրականությունից, Ինտերնետից, Բնապահպանության նախարարության և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունից.
- խթանում է հասարակական քննարկումները շրջակա միջավայրի հարցերի շուրջ՝ դրանով իսկ նպաստելով հասարակական մասնակցությանը որոշումների կայացմանը.
- տրամադրում է տարածք Բնապահպանության նախարարության, Փորձագետների խորհրդի և Խորհրդակցական խորհրդի անդամների, ինչպես նաև՝ այլ պետական ու հասարակական կազմակերպությունների կողմից բնապահպանության ոլորտում իրականացվող տեղեկատվական-հաղորդակցական աշխատանքների (ներառյալ՝ հանրային հարաբերությունները) ապահովման համար.

- տարածում է բնապահպանական խնդիրներին առնչվող տեղեկատվությունը և այն մատչելի դարձնում հասարակության համար.
- աջակցում է արդարադատության մատչելիության վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը:

#### **4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

4.1. Փոխըմբռնման հուշագրի համաձայն Կենտրոնի կառուցվածքը հետևյալն է. Հիմնադիր կողմեր, Խորհրդակցական խորհուրդ և Փորձագետների խորհուրդ:

##### **4.2 Հիմնադիր կողմեր**

4.2.1. Փոխըմբռնման հուշագրի համաձայն Կենտրոնի Հիմնադիր կողմերն են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակը և ՀՀ բնապահպանության նախարարությունը:

4.2.2. Հիմնադիր կողմերի ներդրումներն ու պարտականությունները ամրագրված են Փոխըմբռնման հուշագրում:

4.2.3. Հիմնադիր կողմերի կողմից վերահսկողությունը Կենտրոնի միջոցների նկատմամբ իրականացնում է Կենտրոնի աշխատակիցը, որը նշանակվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

##### **4.3 Խորհրդակցական խորհուրդ**

4.3.1. Փոխըմբռնման հուշագրի համաձայն Կենտրոնի Խորհրդակցական խորհուրդը կազմված է Կենտրոնի հիմնական դոնորների, շահագրգիռ դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից:

4.3.2. Կենտրոնի Խորհրդակցական խորհրդի խնդիրներն ու իրավասությունները ամրագրված են Փոխըմբռնման հուշագրում:

4.3.3. Խորհրդակցական խորհրդի անդամները կարող են մասնակցել Փորձագետների խորհրդի նիստերին առանց ձայնի իրավունքի:

##### **4.4 Փորձագետների խորհուրդ**

4.4.1. Փոխըմբռնման հուշագրի համաձայն Կենտրոնի Փորձագետների խորհուրդը բաղկացած է ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ ազգային ժողովի ու հասարակայնության ներկայացուցիչներից:

4.4.2. Փորձագետների խորհրդի նպատակներն ու խնդիրներն են.

ա/ Կենտրոնի խորհրդանշանի ընդունումը.

բ/ Կենտրոնի գործունեության Կանոնակարգի մշակումը, փոփոխումը և ընդունումը.

գ/ Կենտրոնի գործունեության տարեկան ծրագրի կազմումը ու հաստատումը.

դ/ Կենտրոնի գործունեության տարեկան ծրագրի իրագործման ապահովումը.

ե/ Կենտրոնի առօրյա գործունեության վերաբերյալ որոշումների կայացումը.

զ/ Փորձագետների խորհրդի անդամների պարտականությունների վերաբերյալ որոշումների կայացումը.

է/ Կենտրոնի և Բնապահպանության նախարարության ու այլ աղբյուրների միջև տեղեկատվության փոխանակումը իր իրավասությունների սահմաններում.

ը/ Կենտրոնի գործունեության լուսաբանումը.

թ/ Կենտրոնի միջոցների կառավարումը.

ժ/ Կենտրոնի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության նախապատրաստումը և տրամադրումը Հիմնադիր կողմերին, Խորհրդակցական խորհրդին ու հասարակայնությանը:

4.4.3. Փորձագետների խորհուրդը ձևավորվում է հետևյալ սկզբունքներով.

ա/ Փորձագետների խորհրդի անդամ դառնալու իրավունք ունի ՀՀ ցանկացած քաղաքացի, ով ընդունում է Կենտրոնի կանոնակարգը, նպատակներն ու խնդիրները և ցանկանում է անհատույց մասնակցել դրա կառավարմանը:

բ/ Փորձագետների խորհրդի անդամների նախնական թիվը և կազմը սահմանված են Հիմնադիր կողմերի համատեղ որոշմամբ՝ Փոխըմբռնման հուշագրով:

գ/ Փորձագետների խորհրդի անդամների թիվը փոփոխվում է Փորձագետների խորհրդի որոշմամբ և այդ մասին տեղեկացվում Հիմնադիր կողմերին:

դ/ ՀՀ բնապահպանության նախարարության և Ազգային ժողովի ներկայացուցիչները նշանակվում են համապատասխան մարմինների կողմից:

ե/ Հասարակայնության ներկայացուցիչները ընտրվում են Փորձագետների խորհրդի նիստում և համաձայնեցվում Հիմնադիր կողմերի հետ:

զ/ Փորձագետների խորհրդի կազմում փոփոխություն կատարվում է անդամների հրաժարականի կամ Փորձագետների խորհրդի առաջարկության հիման վրա, որը համապատասխանաբար ուղղվում է սույն կետի դ/ և ե/ կետերում նշված մարմիններին:

է/ Փորձագետների խորհրդի անդամը կարող է ազատ դուրս գալ Փորձագետների խորհրդի անդամությունից՝ այդ մասին մեկ ամիս շուտ տեղեկացնելով համապատասխան նշանակող կամ ընտրող մարմնին:

ը/ Փորձագետների խորհրդի անդամի կողմից Կենտրոնի կանոնակարգը խախտելու, իր կողմից ստանձնած պարտականությունները անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու և Փորձագետների խորհրդի նիստերից 6 ամսվա ընթացքում 5 անգամ բացակայելու դեպքում Փորձագետների խորհրդի անդամի անդամության դադարեցման հարցը քննարկվում է Փորձագետների խորհրդի նիստում և համապատասխան որոշումը կամ առաջարկությունը ներկայացվում Հիմնադիր կողմերին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

թ/ Փորձագետների խորհրդի անդամներն ընտրվում են 1 տարի ժամկետով: Փորձագետների խորհրդի անդամների գործունեությունը շարունակվում է մինչև Փորձագետների խորհրդի հաջորդ կազմի առաջին նիստի գումարումը:

ժ/ Անդամությունը Փորձագետների խորհրդում իրականացվում է հասարակական հիմունքներով՝ անհատույց:

4.4.4. Փորձագետների խորհրդի անդամի իրավունքներն ու պարտականություններն են.

ա/ Կենտրոնի նպատակների ու խնդիրների իրագործումը.

բ/ Փոխըմբռնման հուշագրով նախատեսված գործառնական պարտականությունների իրագործումը.

գ/ Կենտրոնի կանոնակարգի դրույթներին հետևելը.

դ/ Փորձագետների խորհրդի նիստերին մասնակցելը.

ե/ Փորձագետների խորհրդի որոշմամբ իրեն առաջադրված պարտավորությունների բարելավիչ կատարումը.

զ/ համապատասխան գործունեության ոլորտներին առնչվող տեղեկատվության տրամադրումը Կենտրոնին.

է/ Կենտրոնին առնչվող հարցերում գործունեություն ծավալելիս Փորձագետների խորհրդի որոշումներով առաջնորդվելը:

4.4.5. Փորձագետների խորհրդի անդամների՝ Կենտրոնի միջոցներից օգտվելու իրավունքները չեն գերազանցում ՀՀ այլ քաղաքացիների իրավունքները:

4.4.6. Փորձագետների խորհրդի նիստեր հրավիրելու կարգը.

ա/ Փորձագետների խորհրդի նիստերը, որպես կանոն, հրավիրվում են ամիսը մեկ անգամ՝ յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթի օրը, ժամը 5-ին:

բ/ Արտահերթ նիստեր կարող են հրավիրվել Փորձագետների խորհրդի անդամների 1/3-ի, խորհրդակցական խորհրդի կամ Հիմնադիր կողմերից որևէ մեկի պահանջով:

4.4.7. Փորձագետների խորհրդի նիստերի անցկացման կարգը.

ա/ Փորձագետների խորհրդի նիստերն անցկացվում են Կենտրոնում: Անհրաժեշտության դեպքում դրանք կարող են անցկացվել արտագնա:

բ/ Փորձագետների խորհրդի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է Փորձագետների խորհրդի անդամների կեսից ավելին:

գ/ Նիստերը վարելու և Փորձագետների խորհրդի աշխատանքները նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում համակարգելու նպատակով ընտրվում է Փորձագետների խորհրդի ժամանակավոր համակարգող՝ 3 ամիս ժամկետով:

դ/ Նիստերում արտացոլված հարցերը և որոշումները արձանագրվում են համակարգողի կողմից:

ե/ Արձանագրությունների պատճենները բաժանվում են Փորձագետների խորհրդի անդամներին և պահվում Կենտրոնում:

զ/ Համակարգողը նախապատրաստում է հաջորդ նիստի նյութերը և բաժանում մասնակիցներին նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ:

4.4.8. Փորձագետների խորհրդի որոշումների ընդունման կարգը.

ա/ Փորձագետների խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է մինչև հաջորդ նիստ:

բ/ Փորձագետների խորհրդի որոշումներն ընդունվում են օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ՝ նախքան հաջորդ հարցի քննարկմանն անցնելը:

## 4.5 Կենտրոնի աշխատակից

4.5.1. Կենտրոնի աշխատակիցը նշանակվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

4.5.2. Կենտրոնի աշխատակցի պարտականությունները ներառում են.

ա/ Կենտրոնի ամենօրյա գործունեության ապահովումը, ներառյալ՝ այցելուների գրանցումը, միջոցառումների մատյանի վարումը և այլն,

բ/ Կենտրոնի միջոցների օգտագործման հսկողությունը սույն Կանոնակարգի 6.5 կետում սահմանված կանոնների համաձայն, ներառյալ՝ տեղեկակիրների անվտանգության ստուգումը, ինտերնետի և այլ համակարգչային ծրագրերի օգտագործումը և այլն,

գ/ աջակցության ցուցաբերումը Կենտրոնի այցելուներին՝ օգտվելու Կենտրոնի միջոցներից և ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն,

դ/ ստացված տեղեկատվության համակարգումը և գրադարանի վարումը,

ե/ Փորձագետների խորհրդի անդամների միջև կապի ապահովումը /մասնավորապես՝ Փորձագետների խորհրդի նիստերը գումարելիս/,

զ/ Ամիսը մեկ անգամ Կենտրոնի գրանցման մատյանների տրամադրումը Փորձագետների խորհրդին,

է/ Կենտրոնի կանոնավոր աշխատանքների համար անհրաժեշտ այլ գործունեության իրականացում:

## **5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

5.1. ՀՀ բնապահպանության նախարարությունը առնվազն երեք ամիսը մեկ անգամ Կենտրոնին է տրամադրում իր համակարգում առկա բաց տեղեկատվությունը:

5.2. Պահանջվող տեղեկատվության բացակայության դեպքում Փորձագետների խորհուրդը հարցում է ուղղում տեղեկատվությանը տիրապետող համապատասխան լիազոր մարմնին:

5.3. Փորձագետների խորհրդի առանձին անդամների՝ Փոխընթացման հուշագրով նախատեսված գործունեության ոլորտների տեղեկատվությունը համապատասխանաբար տրամադրվում է Կենտրոնին Փորձագետների խորհրդի անդամների կողմից:

5.4. Տեղեկատվությունը Կենտրոնին փոխանցվում է տպագիր, էլեկտրոնային կամ այլ տեսքով և տեղակայվում Կենտրոնի աշխատակցի կողմից:

## **6. ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

6.1. Կենտրոնի միջոցներն օգտագործվում են միայն բնապահպանական իրազեկության բարձրացման և տեղեկատվության փոխանակման նպատակով:

6.2. Յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ կարող է անվճար, ազատ և հավասարապես օգտվել Կենտրոնի միջոցներից և ծառայություններից՝ իր իրազեկության բարձրացման նպատակով՝ սույն Կանոնակարգով սահմանված կարգով:

6.3. Կենտրոնի միջոցներից օգտվող յուրաքանչյուր անձ գրանցվում է Կենտրոնի աշխատակցի կողմից և ենթարկվում Կենտրոնի գործունեության համար սահմանված կանոններին:

6.4. Կենտրոնի միջոցների համար պատասխանատվություն է կրում ՀՀ բնապահպանության նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Կենտրոնի միջոցները կառավարվում են Փորձագետների խորհրդի կողմից:

6.6. Կենտրոնի միջոցների օգտագործումը վերահսկվում է Կենտրոնի աշխատողի կողմից:

6.7 Միջոցների կորստի, հափշտակության, վնասվելու կամ լուրջ անսարքության դեպքում Փորձագետների խորհուրդը զեկույց է ներկայացնում Խորհրդակցական խորհրդին:

6.8 Միջոցների վնասվելու կամ լուրջ անսարքության դեպքում Փորձագետների խորհուրդը կարող է դիմել Խորհրդակցական խորհրդին համապատասխան աջակցություն ստանալու նպատակով:

6.9 Կենտրոնի միջոցներից օգտվելու կարգը հետևյալն է.

#### 6.9.1 Տարածք

ա/ Տարածքը տրամադրվում է պետական և ոչ պետական կազմակերպություններին բնապահպանության ոլորտին առնչվող հանդիպումների և հանրային միջոցառումների անցկացման համար (ինչպես օրինակ՝ կլոր սեղաններ, սեմինարներ, մամլո ասուլիսներ և այլն):

բ/ Տարածքը միջոցառումների նպատակով օգտագործել ցանկացող կազմակերպությունը հնարավորին չափ շուտ հայտ է ներկայացնում Կենտրոնի աշխատակցին ընդունված կարգով: Կենտրոնի աշխատակիցը Փորձագետների խորհրդին տեղեկացնելուց և համակարգողի հետ համաձայնեցնելուց հետո տալիս է թույլտվություն և գրանցում միջոցառումը համապատասխան մատյանում: Ըստ միջոցառման ոլորտի, Փորձագետների խորհրդի համապատասխան անդամի կամ նրա ներկայացուցչի ներկայությունը Կենտրոնում անցկացվող միջոցառմանը ցանկալի է: Միջոցառումից հետո մեկ շաբաթվա ընթացքում միջոցառում կազմակերպող կազմակերպությունը ամփոփի հաշվետվություն է ներկայացնում Փորձագետների խորհրդին:

գ/ Կենտրոնի տարածքը բաց է այցելուների համար երկուշաբթի-ուրբաթ օրերին ժամը 10:00-17:00: Ընդմիջման ժամը՝ 13:00-14:00:

դ/ Կենտրոնի տարածքը փակ է այցելուների համար Կենտրոնում անցկացվող միջոցառումների ընթացքում: Կենտրոնի զբաղվածության գրաֆիկը համապատասխանաբար փակցվում է Կենտրոնի դռանը:

ե/ Միջոցառումների ընթացքում մասնակիցներին չի թույլատրվում Կենտրոնի միջոցները օգտագործել միջոցառմանը չառնչվող նպատակներով:

զ/ ՀՀ բնապահպանության նախարարությունն օգտագործում է տարածքը իր կարիքների համար:

#### 6.9.2. Գրադարան

ա/ Գրադարանը պարունակում է գրքեր, ծայնաժապավեններ, տեսաժապավեններ, նկարներ, սխեմաներ, քարտեզներ, սկավառակներ, կոմպակտ սկավառակներ, սլայդեր և այլն:

բ/ Գրադարանում պարունակվող նյութերը չի թույլատրվում հանել տարածքից դուրս:

#### 6.9.3. Համակարգիչներ

ա/ Համակարգիչներից կարելի է օգտվել անսահմանափակ տևողությամբ: Այցելուների կուտակումների դեպքում Կենտրոնի աշխատակիցը կարող է սահմանափակել այդ տևողությունը մինչև 30 րոպե:

բ/ Էլեկտրոնային տեղեկակիրները համակարգչում տեղադրելուց առաջ (սկավառակներ, կոմպակտ սկավառակներ) Կենտրոնի աշխատակիցը ստուգում է դրանց անվտանգությունը:

#### 6.9.4. Տպիչ մեքենա

Տպիչ մեքենան գործարկվում է միայն օգտագործող անձի՝ Կենտրոնի աշխատակցի կողմից համապատասխան կարգով գրանցումից հետո: Տպվող էջերի քանակը չպետք է գերազանցի 5-ը:

#### 6.9.5. Պատճենահանող մեքենա

Պատճենահանող մեքենան գործարկվում է միայն օգտագործող անձի՝ Կենտրոնի աշխատակցի կողմից համապատասխան կարգով գրանցումից հետո: Պատճենահանվող էջերի քանակը չպետք է գերազանցի 5-ը:

#### 6.9.6. Հեռախոս

Հեռախոսն օգտագործվում է միայն քաղաքային հեռախոսազանգերի համար:

#### 6.9.7. Ֆաքս

Ֆաքսը օգտագործվում է միայն բնապահպանական տեղեկատվություն ստանալու նպատակով:

### 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

7.1. Կենտրոնի ֆինանսական միջոցները գոյանում են.

ա/ կամավոր ներդրումներից և դրամական նվիրատվություններից,

բ/ դրամական միջոցներից և նյութական արժեքներից՝ ստացված իրավաբանական անձանցից և քաղաքացիներից որպես նվիրատվություն և կտակ,

գ/ օրենքով չարգելված այլ մուտքերից: